

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարությունի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-486-07.04.2014-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունն ընդհանուր առմամբ հնարավորություն է ընձեռում տնտեսավարող սուբյեկտներին զբաղվելու գործունեության բաղադրիչներից թե՛ որևէ մեկով և թե՛ բոլոր տեսակներով: Սկզբունքորեն համաձայն լինելով օրենքի նախագծի գաղափարին՝ նպատակահարմար ենք համարում խնդրարկվող գործունեության բաղադրիչները տարանջատելու փոխարեն դրանք ներկայացնել որպես «կամ կամ «և» շաղկապով բաժանված գործունեության տեսակներ՝ տնտեսավարողներին հնարավորություն ընձեռելով նշված գործունեության տեսակներով զբաղվելու ցանկության

դեպքում ներկայացնելու այդ գործունեության տեսակներից որևէ մեկով առանձին զբաղվելու մասին հայտ: Օրենքի նախագծի ընդունման դեպքում՝ խնդրի համապարփակ կարգավորման նպատակով անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում՝ գործունեության յուրաքանչյուր տեսակի լիցենզավորման համար սահմանվող տուրքի առանձին դրույքաչափ:

Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները՝ անհրաժեշտ է օրենքի նախագծի 1-ին հոդվածում «14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ» բառերը փոխարինել «14. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժինը շարադրել նոր խմբագրությամբ» բառերով, իսկ 3-րդ կետում «Վտանգավոր թափոնների պահպանում» բառերը՝ «Վտանգավոր թափոնների պահում» բառերով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարներին հանձնարարվել է վերանայել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակում նշված գործունեության տեսակները՝ համանման խնդիրների վերհանման և կարգավորման նպատակով: Պատրաստ ենք այս հարցում

համագործակցել օրենքի նախագծի հեղինակի հետ՝ նրա կողմից նման ցանկության առկայության դեպքում:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտություն կառաջանա փոփոխություններ կատարելու՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշման մեջ.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2004 թվականի փետրվարի 5-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 46-Ն որոշման մեջ:

Նշված փոփոխությունները կընդունվեն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) տարանջատվում են շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության բաղադրիչները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Շիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **բացասական ազդեցություն:**

Նախագծով տարանջատվում են շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության բաղադրիչները, ինչը կհանգեցնի լրացուցիչ ֆինանսական ծախսերի և վարչարարության ավելացմանը ոլորտում գործող ընկերությունների համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտ է փոփոխություն կատարել նաև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական ծախսերի վրա Նախագծի վերջնական ազդեցությունը հնարավոր կլինի գնահատել միայն Նախագծի ամբողջական փաթեթի առկայության դեպքում:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

**«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ
օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման
ազդեցության գնահատման**

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված օրենքի նախագծով առաջարկվում է տարանջատել խնդրո առարկա լիցենզավորման տեսակի բաղադրիչները՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ տնտեսվարողի համար:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին առնչվում է և ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չհակասելու նպատակով անհրաժեշտ է՝

- Օրենքի նախագծի 1-ին հոդվածում՝

1) «14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ» բառերը փոխարինել «14. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժինը շարադրել նոր խմբագրությամբ» բառերով՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջների:

2) 3-րդ կետի «Վտանգավոր թափոնների պահպանում» բառերը փոխարինել «Վտանգավոր թափոնների պահում» բառերով, քանի որ «Թափոնների մասին» ՀՀ օրենքում (հոդված 4) սահմանված է «թափոնների պահում» հասկացությունը:

- Օրենքի նախագծի ընդունմամբ անհրաժեշտություն կառաջանա Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 4-ամսյա ժամկետում փոփոխություններ կատարել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի **«Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին»** N121-Ն որոշման մեջ,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2004 թվականի փետրվարի 5-ի **«Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման միջգերատեսչական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին»** N 46-Ն որոշման մեջ:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ**

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» նախագծի ընդունման դեպքում առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի բյուջեարային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

1. Նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման առարկան և արդյունքները.

Հայաստանի Հանրապետության ««Լիցենզավորման մասին» օրենքով լիցենզավորման գործունեության տեսակների ցանկում շրջակա միջավայրի բնագավառում տնտեսվարող սուբյեկտին լիցենզիա տրամադրվում էր մեկ բաղադրիչով՝ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման:

Հայաստանի Հանրապետության ««Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը կոչված է տնտեսվարող սուբյեկտի համար ստեղծել առավել բարենպաստ պայմաններ՝ տարանջատելով գործունեության բաղադրիչները, որի արդյունքում առանձին բաղադրիչներով լիցենզիա ձեռք բերելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը կներկայացնի միայն տվյալ բաղադրիչին ներկայացվող պահանջները:

2. Նորմատիվ իրավական ակտի նախագծի ընդունման կամ չընդունման դեպքում՝ դրանց կիրարկման արդյունքում կանխատեսվող հետևանքները և բյուջեարային բնագավառի վրա դրանց ազդեցությունն ըստ ժամկետների.

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ նախագծի ընդունումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի ավելացման, իսկ Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ելքերի վրա նախագծի ընդունումը կունենա չեզոք ազդեցություն:

Պ-486-07.04.2014-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԼԻԳԵՆՉԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

	14. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Վտանգավոր թափոնների վերամշակում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Վտանգավոր թափոնների վնասազերծում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
3.	Վտանգավոր թափոնների պահպանում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
4.	Վտանգավոր թափոնների փոխադրում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ
5.	Վտանգավոր թափոնների տեղադրում	ՀՀԿ	Բ	-	Փ	-	Ո	Հ	Վ

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 14-րդ կետն իսկզբանե խմբագրվել է այնպես, ինչպես գործող օրենքն է: Այսինքն, օրենքի սկզբանական բովանդակության իմաստով՝ քննարկվող գործունեությունը դիտարկվել է որպես մեկ ամբողջություն, եւ դրա ցանկացած բաղադրիչի համար լիցենզիա ձեռք բերելու նպատակով տնտեսվարող սուբյեկտը հարկադրված է եղել ներկայացնելու նաեւ մյուս բաղադրիչներին վերաբյալ փաստաթղթերը, բավարարել այդ բոլոր բաղադրիչներին վերաբերող պահանջները:

2007 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում (22.02.2007, ՀՕ-116-Ն) քննարկվող դրույթը խմբագրվեց հետեւյալ կերպ.	վտանգավոր թափոնների՝ -վերամշակում -վնասազերծում -պահպանում -փոխադրում եւ տեղադրում	ՀՀԿ	Բ	Ա	Փ	-	Ո	Հ	Վ.
1.									

Փաստորեն, նշված օրենսդրական փոփոխության արդյունքում գործունեության բաղադրիչները տարանջատվեցին եւ արդյունքում տնտեսվարող սուբյեկտի համար ստեղծվեցին առավել բարենպաստ պայմաններ: Մասնավորապես՝ գործունեության բաղադրիչներից որեւէ մեկը նախաձեռնելու դեպքում, գործարարը պարտավորվեց ներկայացնել միայն տվյալ բաղադրիչին ներկայացվող պահանջները:

2010 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով (08.12.2010, ՀՕ-227-Ն) կրկին անցում կատարվեց սկզբնական խմբագրությանը: Այսպիսով, փոփոխության արդյունքում

տնտեսվարող սուբյեկտը կրկին հարկադրված է քննարկվող գործունեության որեւէ բաղադրիչով զբաղվելու նպատակով ապահովել նաեւ մյուս բաղադրիչներին ներկայացվող պահանջները:

Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտը մտադիր է իրականացնելու միայն վտանգավոր թափոնների փոխադրում, վերջինս հարկադրված է լիցենզիա խնդրարկելիս ապահովել նաեւ վտանգավոր թափոնների վերամշակմանը, վնասազերծմանը, պահպանմանը, տեղադրմանը ներկայացվող փաստաթղթերը եւ պահանջները: Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 2 «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 14-րդ կետի 1-ին ենթակետի կիրառության վերաբերյալ պաշտոնական պարզաբանման համաձայն՝ «Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 14-րդ կետի 1-ին ենթակետում նշված գործունեության բոլոր թվարկված տեսակներից յուրաքանչյուրով զբաղվելու համար անհրաժեշտ է լիցենզիայի ստացում, անկախ այն հանգամանքից՝ դրանք միավորված են մեկ միասնական լիցենզիայում, թե ոչ»:

Առկա օրենսդրական կարգավորումը հակասում է Օրենքի տրամաբանությանը: Օրենսդրի կողմից գործունեության առանձին տեսակներով զբաղվելու համար լիցենզիա նախատեսելը, ինչպես նաեւ դրանց ներկայացվող կոնկրետ պահանջները եւ փաստաթղթերը ինքնանպատակ չեն, այլ ուղղված են անձանց առողջության պաշտպանությանը, զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը, հսկողության իրականացմանը եւ այլն: Տվյալ պարագայում միայն, ասենք, փոխադրման գործունեություն նախաձեռնող տնտեսվարող սուբյեկտի համար լրացուցիչ պարտավորություն նախատեսելը (այն է ապահովել վտանգավոր թափոնների վերամշակմանը, տեղադրմանը, պահպանմանը վերաբերող պահանջներ եւ փաստաթղթեր) որեւէ կերպ չի ընդգրկվում Օրենքի նպատակների եւ տրամաբանության շրջանակներում, քանի որ լիցենզավորող մարմինը օժտված է նախնական հսկողության (որն իրականացվում է լիցենզիա տրամադրելիս Օրենքի նպատակներից բխող փաստաթղթեր եւ տեղեկություններ պահանջելու եւ դրանք ուսումնասիրելու միջոցով) եւ հետագա վերահսկողության իրավասությամբ, որն իրականացվում է լիցենզավորված գործունեության նկատմամբ օրենսդրությամբ սահմանված պահանջների եւ պայմանների պահպանման հետագա ստուգման միջոցով:

Հետեւաբար, նախատեսված լրացուցիչ պարտավորությունը չի կրում հիմնավորված բնույթ:

Առկա իրավակարգավորման պարագայում լրացուցիչ խոչընդոտներ ու ավելորդ բեռ է ստեղծվում տնտեսվարող սուբյեկտի համար տնտեսական գործունեություն նախաձեռնելիս. վերջինս պարտավորված է ապահովել որոշակի պահանջներ, որոնք կապված չեն իր կողմից նախաձեռնվող գործունեության հետ, չեն բխում դրանից:

Սույն նախագծի ընդունմամբ վերոնշյալ բացը շտկվում է: